ՌՈՒՍ-ՀԱՅԿԱԿԱՆ
ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

www.rau.am

ԲՄԿ ՊՈՒՀ ՌՈՒՍ-ՀԱՅԿԱԿԱՆ (ՍԼԱՎՈՆԱԿԱՆ) ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ՌԵԿՏՈՐ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«17» 03 2025թ. №09-03/ 781

Ք. Երևան

ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԻՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ԳՈՐԾԸՆԹԱՑԻՆ ՄԱՍՆԱԿՑԵԼՈՒ ԻՐԱՎՈՒՆՔ ՉՈՒՆԵՑՈՂ ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԻ ՑՈՒՑԱԿՈՒՄ ՆԵՐԱՌԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ինտերակտիվ սենսորային էկրանների ձեռքբերման նպատակով ԲՄԿ ՊՈՒՀ Ռուս-Հայկական (Սլավոնական) համալսարանի ռեկտորի 2024 թվականի դեկտեմբերի 23-ի N09-03/3213 հրամանի հիման վրա «ՌՀ-ՍՀ-ԳՀԱՊՁԲ-44/24» ծածկագրով գնանշման հարցման ձևով կազմակերպվել է գնման ընթացակարգ:

Հայտերի գնահատման փուլում պարզվել է, որ մասնակիցներ՝ «ՔՈՄՓ ՊՐՈ» (ՀՎՀՀ՝ 00224917, էլ. փոստ՝ info@comp.am, հեռ. +37491403647) և «ԱՅՍՈԼՈՒՇՆՍ» (ՀՎՀՀ՝ 00909659, էլ. փոստ՝ info@isolutions.am, հեռ. +37460700111) սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունների (այսուհետ՝ նաև Ընկերություններ) կողմից ներկայացված հայտերում առաջարկվող ապրանքների ամբողջական նկարագրերի (Հավելված 1.1) 1-ին և 2-րդ չափաբաժինների տեխնիկական բնութագրերը չեն համապատասխանում հրավերի պահանջներին:

Հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2017թ.-ի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման կարգ»-ի (այսուհետ՝ Կարգ) 41-րդ կետը, ինչպես նաև հրավերի առաջին մասի 8.8 և 8.9 կետերը՝ գնահատող հանձնաժողովի նիստը կասեցվել է և Ընկերություններին տրվել է շտկման հնարավորություն:

Ընկերությունների կողմից սահմանված ժամկետում ներկայացվել է անհրաժեշտ տեղեկատվությունը, սակայն գնահատող հանձնաժողովը արձանագրել է, որ ներկայացված պարզաբանումներում «Անվտանգության վկայագիր-CC EAL5+» ցուցանիշի վերաբերյալ բացատրությունը և կցված վկայագրերը չեն համապատասխանում հրավերի տեխնիկական բնութագրի պահանջներին:

Հաշվի առնելով վերոգրյալը և առաջնորդվելով Կարգի 29-րդ կետով՝ գնահատող հանձնաժողովը մերժել է Ընկերությունների հայտերը:

Ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին կետի 6-րդ մասի պահանջներով՝ *որոշում եմ.*

1. Գնահատող հանձնաժողովի կողմից Ընկերությունների հայտերը մերժելու հիմքերը համարել բավարար:

2. Գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով «ՔՈՄՓ ՊՐՈ» և «ԱՅՍՈԼՈՒՇՆՍ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունների տվյալները համապատասխան հիմքերով ներկայացնել լիազորված մարմին՝ ՀՀ ֆինանսների նախարարություն:

ՀՌՀ ռեկտոր՝ **Է. Մ. Սանդոյան**

ՌՈՒՍ-ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ
0051, Հայաստան, Երևան, 123, Հովսեփ Էմինի փ. | հ.: (+374 12) 77 57 75 | info@rau.am